զական) եկեղեցու համար»։ Տօներից յետոյ քեռուս հետ միասին գնացինք առաջնակարգ հարուստ հայ վաճառական Տ. Ն..ի խանութը, որ գտնուում էր Թիֆլիզի Հայոց շուկայ կոչուած փողոցի վրայ։ Դիմելով հարուստ հայ խանութպանին, խնդրեցի, որ ցոյց տայ ինձ Հայկական ձևով շինուած լաւ խաչվառներ։ Կարճամիտ գործակատարը ցոյց տուեց մեզ կտաւի վրայ նկարուած մի քանի տգեղ և անճաշակ բաներ, որոնք անպէտք բաներ էին։ Ես պահանջեցի, որ լաւ տեսակները ցոյց տան, բայց քեռիս մի փոքր բարկացած՝ աւելացրեց. — «Եախշըսին դեաթրուն, մեան փուլ վերաջաղամ, միւֆտա խատամիրամքի, բուղադար նազ-տուզ էյլիրսըզ»—Լաւը բերէք, ես փող պիտի տամ, ձրի խօտ չեմ ուզում, որ այսչափ նազ ու տուզ էք անում։ Քեռիս դեռ ևս չէր վերջացրել իւր խօսքը, որ յանկարծ միամիտ Թիֆլիզցին ընդհատեց նրան և զարմացած հարցրեց ինձանից.—«Վա՛հ, Տէրտէր, էս վո՞ւնց է պատահի, վուր Թուրքը ուզում է խաչվառ առնի մեր Հայու ժամի համար. դանա՛, ձիր երգրի Թուրքիրը մեր խաչվառին հաւատումի՞ն»։ Ո՛հ, Տէր իմ Աստուած, քեռիս կրակ ու բոց կտրուեց իրեն ատելի «Թուրք» խօսքի պատճառով և ձեռքը տանելով իւր կողքից կախուած դաշոյնի դաստակին, մաղ մնաց, որ մաս-մաս պիտի անէր հաստափոր հային։ Հազիւ հազ բռնեցի նրա ձեռքը ուժգին թափով և աղաչելով խնդրեցի, որ դաշոյնը իւր պատեանը դնէ և իմ ներկայութեամբ հայի արիւն չթափէ, այլ խօսքով յայտնի իւր ասելիքը։ Դէ՛հ, քեռիս